

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բաճախիցի Գիտությունների դոկտոր

«Արևելյան գրականության գլխավոր խմբագրությունը» լույս է ընծայել Առաքել Դավրիժեցու պատմության ուսուցչին թարգմանությունը (Ննուկա, 1973), որ տպագրության է հանձնարարել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը: Թարգմանիչը, ներածական ակնարկի ու ծանոթագրությունների հեղինակը այս վերջին հաստատության գիտաշխատող Լ. Ա. Խանլարյանն է՝ իր վաստակով առաջին անգամ ներկայացող, խմբագիրը՝ բանասիրության դոկտոր Գ. Աբգարյանը:

Գիրքն, ընդհանուր առմամբ, լավ տպավորություն է թողնում, նաև ուրախացնում, որ հայոց և հարևան ազգերի XVI—XVII դդ. պատմության այս մեծարժեք սկզբնաղբյուրը ուսուցչին լիակատար թարգմանության շնորհիվ դառնում է արևելագիտական լայն շրջանների սեփականությունը:

Մասնագիտական պարբերականներն, անշուշտ, կգրախոսեն և ըստ արժանվույն կգնահատեն թարգմանչի աշխատանքը, ուստի մենք կուզենայինք հեղինակի, խմբագրի և Մատենադարանի հարգարժան ընկերների ուշադրությունը հրավիրել զրքի առաջարկում տեղ գտած մի անճշտության վրա, որպիսիք արդեն ո՞րերորդ անգամ է կրկնվում են նրանց հրատարակություններում և մեծ տպաքանակով տարածվում:

Բանն այն է, որ Լ. Խանլարյանը միամիտ անկեղծությամբ անցյալի բանասերների վաստակը վերագրել է մերօրյա մի թարգմանչուհու, իսկ այդ վերջինն էլ առանց խղճի խաթի իր գյուտն է համարել մի փրողություն, որ հայտնի էր շատ վաղուց:

Լ. Խանլարյանը գրում է. «Միայն վերջերս մեզ հայտնի դարձավ, որ Առաքել Դավրիժեցին 1636 թ. եղել է Հովհաննավանից առաջնորդ, որտեղից մեկ տարի հետո մեկնել է էջմիածին» (առաջաբան, էջ 16): Մեղմ ասած՝ սա անտեղյակության արդյունք է, քանի որ ավելի քան հարյուր երեսուն տարի առաջ, դեռ 1842-ին, նշանավոր հայ պատմաբան Հովհաննես Շահխաթունյանցը իր «Ստորագրություն կաթողիկէ էջմիածինի և հինգ գաւառացն Արարատայ» տեղագրություն և հատորում, թվարկելով հիշյալ վանքի առաջնորդներին, 114-րդ էջում, 28-րդ համարի տակ հիշել է. «Իւր, Առաքել վարդապետ Դավրիժեցի պատմագիր ի թուին ՌՁԵ, յամի 1636. կացեալ ամ մի յառաջնորդութեան՝ հրաժարի և գնայ յէջմիածին»:

Եթե սխալը միայն այս լիներ, թերևս չարժեր անդրադառնալ, քանի որ այդպես վարվում են ուրիշներն էլ և նորություն հռչակում շատ հնություններ:

Լ. Խանլարյանն, իհարկե, իր վերոհիշյալ հայտարարության նկատմամբ վստահություն ներշնչելու դիտավորությամբ, վերևի գրածը ճոխացրել է ծանոթագրությամբ, թույլ տալով կրկին նոր սխալ և դառնալով իր դյուրահավատության զոհը. նա գրել է. «Օգտվելով առիթից, խորին երախտագիտություն

ենք հայանում Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանին, որը Զաքարիա Քանաքեռցու Պատմադրության ռուսերեն թարգմանության ժամանակ, այդ աշխատության ձևադրերից մեկում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3024, Թ. 143ր) դառնալ տողերը. «Թուին ՌՁն եղև հայր Առաքել վարդապետ Թարիղեցի Սա է, որ րադում անդամ յիշեալ եմ և զամենայն բան ի սմանէ հարցեալ եմ և ուսեալ Կացեալ առաջնորդ ամ մի, և թողեալ զնաց չէջմիածին և արար դՊատմութիւն հրամանաւ Յակոբ Կաթողիկոսին և մեռաւ և թողեցաւ չէջմիածին» (առաջաբան, էջ 33, ծան. 6: «Закарий Канакерци, Хроника», Մոսկվա, 1969, էջ 263):

Կարդում ես այս տողերը և զարմանում, թե ինչպե՞ս կարելի էր անփորձ բանասերին թյուրիմացության մեջ գցել և հարկադրել երախտագիտություն հայտնել մեկին մի բանի համար, որ ուրիշներն առանց նման ակնկալիքի կատարել են նրանից վաթսուն և ավելի տարիներ առաջ:

Մի՞թե տեղյակ չեն նրանք, որ Զաքարիա Սարկավազ Քանաքեռցու Պատմադրության Գ հատորի, այսինքն՝ «Լուսնակ սուրբ ուխտին Յովնանու վալուս» դրվածքի առաջին (և ցայժմ միակ) հրատարակության մեջ առկա բոլոր ուղակասած ու թերի հատվածները, սխալ կամ բացթողումներով տպագրված բառերն ու արտահայտությունները ուղղվել ու հրատարակվել են դեռևս 1911 թ. Վիեննայի Միթրայան միաբանության 100-ամյակին նվիրված «Հուշարձան» դրական ժողովածուի մեջ, բանասեր Կարապետ Բասմաջյանի ձեռքով, «Զաքարիա Սարկավազի «Կոնդակը» խորագրով հոդված-հրապարակման մեջ: Հենց այդտեղ, 354-րդ էջում են Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանին վերագրված տողերը, այն էլ առանց խմբագրման, ինչպես Զաքարիայի գրչի տակից են դուրս եկել:

«Թ. Թուին ՌՁն. Եղև Հայր Առաքել վարդապետ Թարումէզեցի Սա է որ րադում անդամ յիշեալ եմ. և զամենայն բան ի սմանէ հարցեալ եմ և ուսեալ Կացեալ առաջնորդ ամ մի. և թողեալ զնաց չէջմիածին և արար դՊատմութիւն հրամանաւ Յակոբ Կաթողիկոսին. և մեռաւ և թողեցաւ չէջմիածին»: (Որպեսզի «Թարումէզեցի» անունը տարակարծության տեղիք չտա, Կ. Բասմաջյանը ծանոթացրել է՝ «Առաքել Դավրիժեցի»):

Ի դեպ, Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանը Զաքարիայի այս խոսքերը «գտել» (ավելի ճիշտ՝ արտադրել) է XVIII դ. վերջերի (1791 թ.) գրչություն հանդիսացող մի ձեռագրից, մինչդեռ Մատենադարանում պահվում է հենց Զաքարիա Քանաքեռցու ինքնագիրը (ըստ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի այդ գրչագրի այժմյան թվահամարն է 1552, հինը՝ 936), որից օգտվելը տվյալ դեպքում միակ բանական և ճշմարիտ ճանապարհը պիտի լիներ Դարբինյան-Մելիքյանի համար:

Հիշեցնենք նաև, որ Զաքարիայի Պատմագրության Գ հատորի պակսող մասերը նոր հրատարակությամբ գիտության սեփականությունը դարձնելու խնդիրը հարուցվել է Կ. Բասմաջյանից էլ առաջ, դեռևս 1896 թ., և այդ մարդը հուշակավոր հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանն է: Իր «Ազաթանգեղոսի աղբյուրներից» աշխատության մեջ նկարագրելով Զաքարիա Սարկավազի ձեռքով նորոգված հսկա «Ճառքնաբեր» և հրատարակելով վերջինին Զաքարիայի կցած հիշատակարան-կենսագրականը, Գ. Տեր-Մկրտչյանը ավելացրել է նաև, որ «Հովհաննավանքի կոնդակը» «մի քանի պակասներով հրատարակված՝ Զաքարիայի Պատմության մեջ, չէջմիածին, 1870, Գ հատոր, նոր հրատարա-

կուսյան ժամանակ անհրաժեշտ է լրացնել այս ճառընտիրից» [Գ. Տեր-Մկրտչյան (Միաբան), Ազաթանգեղոսի աղբյուրներից, Վաղարշապատ, 1896, էջ 42]: Գ. Տեր-Մկրտչյանի և Կ. Բասմաջյանի աշխատություններին տեղյակ լինելու դեպքում, հանլարյանը հազիվ թե անտեղի շնորհակալության խոսք ուղղեր Մ. Դարբինյան-Մելիքյանին:

Բայց ամբողջ ցավն այն է, որ Մ. Դարբինյան-Մելիքյանն էլ տեղյակ չի եղել իր հետազոտած խնդրին վերաբերող այդ կարևորագույն աշխատություններին կամ էլ ինչ-ինչ դիտավորություններով փրեն իբրև այդպիսին է ներկայացրել:

Բաց ենք անում 1969 թ. Մ. Դարբինյան-Մելիքյանի թարգմանությամբ, առաջաբանով ու մեկնաբանություններով Մոսկվայում լույս տեսած «Закариан Канакерца, Хроника» հատորը: Այդտեղ ևս Գ. Տեր-Մկրտչյանի ու Կ. Բասմաջյանի անուններին չենք հանդիպում, մինչդեռ նրանց աշխատությունների օգտագործումից գիրքը կարող էր միայն ու միայն շահվել: Անտեսված է նաև Զաքարիա Քանաքեռցու հիշատակարանը, որ հրատարակված է Գ. Տեր-Մկրտչյանի ձեռքով, 1896-ին («Ազաթանգեղոսի աղբյուրներից», էջ 43—47):

Հայագիտությունը հասարակագիտական մյուս բնագավառների նման ունի իր անառարկելի հեղինակությունները, առանց որոնց աշխատությունների հանգամանալից ուսումնասիրության հայ բանասերը իրավունք չունի վճիռներ կայացնելու: Գ. Տեր-Մկրտչյանը այդօրինակ հեղինակություններից է, նման Ալիշանին, Այտինյանին, Տաշյանին, Ադոնցին, Աբեղյանին: Եթե ո՛չ հանլարյանն ու Դարբինյան-Մելիքյանը, ապա նրանց գրքերը հրատարակության նախապատրաստող գիտնականներից մեկը գոնե չէր կարող պատահել, որ տեղյակ չլինեի Գ. Տեր-Մկրտչյանի ու Բասմաջյանի աշխատություններին: Իսկ թե ինչու են անտեսել, այդ է, որ մեզ համար մնում է անհասկանալի:

Առաջին անգամը չէ, սակայն, որ թարգմանիչ և բանասեր Մ. Դարբինյան-Մելիքյանը այդպես անհոգի վերաբերմունք է ցույց տալիս Գ. Տեր-Մկրտչյանի անձի ու վաստակի նկատմամբ: Երկու տարի առաջ վերատպելով Շապուհ Բադրատունուն վերագրված գրական հուշարձանի հայերեն բնագիրը և զուգահեռաբար թարգմանելով ռուսերեն, իր առաջաբանի ու ծանոթությունների մեջ նա ո՛չ միայն դժկամությամբ է խոսել Գ. Տեր-Մկրտչյանի՝ ալդ մեծարժեք հուշարձանի առաջին հայանագործողի և քննական բնադրի կարևոր մասը պատրաստողի մասին, ո՛չ միայն խեղված ձևով է ներկայացրել այդ գրչագրի գյուտի և հրատարակման մանրամասները, այլև արտատպելով հայերեն բնագրի երկրորդ մասին Գ. Տեր-Մկրտչյանի կցած մեկնաբանումներն ու ծանոթությունները և ամբողջությամբ վերագրելով դրանք Մեսրոպ Տեր-Մովսիսյանին, առանց խղճի խայթի հայտարարել է. «Հրատարակված բնագրին, որ չափազանց ճշտորեն վերարտադրում է գրչագիրը, Մ. Տեր-Մովսիսյանը կցել է կարևոր բնագրագիտական ծանոթություններ՝ կատարելով բանասիրական մի շարք արժեքավոր ճշգրտումներ» («История анонимного повествователя. Математик и ананонимный редактор», Երևան, 1971, էջ 36):

Հարկ կա՞ր արդյոք նման անբարեմիտ քայլի դիմելու, երբ Մ. Տեր-Մովսիսյանն իր ժամանակին գրել է. «Ցանկանալով հարազատությամբ վերարտադրել ականավոր գիտնական Գալուստ Տեր-Մկրտչյանի վերջին գրավոր աշխատությունը, նրա մեջ որևէ փոփոխություն չենք մտցնում. նույն իսկ ի վնաս բնագրի ամբողջությանը: Մենք պահպանում ենք նրա բաժանմունքները:

1—132 սկսում ենք նոր էջից և լուսանցի ծանոթությունների վրա շատ քիչ բան ենք ավելացնում» («Պատմություն Շապուհ Բագրատունու», ի լույս ածին Գ. Տեր-Մկրտչյանի և Մեսրոպ Կալսկոպոս, էջմիածին, 1921, էջ XXXIV):

Եթե անդամ Մ. Տեր-Մովսիսյանի այս խոստովանությունն էլ չլինի, դարձյալ առանձին դժվարություն չպիտի ներկայացնեն որոշել, թե ծանոթությունների իրական հեղինակն ո՞վ է, քանի որ միայն Գ. Տեր-Մկրտչյանը կարող էր դրել. «Ուրիշ բարրապետներում յորման նշանակում է ինչպես, օրինակ մեր դյուղում (Մուղրոթ, դաղթած Ջերմուկ-Իլիճայից) էսման, էտման, էման = Վասպես, աղպես, այնպես. յորման = ինչպես» («Պատմություն...», էջ 60: «История...», էջ 151): Հարկ կա ասելու, որ Մուղրոթը Ախալցխայի նշանավոր դյուղերից է, Գ. Տեր-Մկրտչյանի ծննդավայրը, մինչդեռ Մ. Տեր-Մովսիսյանը սյունեցի էր:

Ինչպես երևում է, Գ. Տեր-Մկրտչյանի վաստակի նկատմամբ ոմանց մոտ թերահավատության տրամադրություններ կան, Մի ժամանակ (դա շատ վաղույց էր) նրա պատրաստած, բայց դժբախտ հանգամանքների բերումով հրատարակել չհասցրած բնադրերն էին անհայտացնում, հիմա՝ հայագիտությանն ու հայ բանասիրությանը մատուցած նրա ծառայություններն են մոռացության մատնվում կամ խեղաթյուրվում:

Այս առումով՝ գիտությանը լավ ծառայություն չի մատուցում նաև բանասիրական դիտողությունների դոկտոր Գ. Աբղարյանի «Մատյաններն ունեն իրենց նակատագիրը» հոդվածը՝ տպագրված «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում (1973, ապրիլի 11):

Ընթերցող լայն շրջաններին պատմելով Շապուհ Բագրատունուն վերադրված ևրկի հայանագործման, հրատարակման և համապատասխան գրքչափի պատմությունը, Գ. Աբղարյանը արտաքուստ կարծես պաշտպանելով մեծ հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանին, իրականում հեռահար հարվածում է. նրան ուսումնառ համարելով մի թյուրիմացության, երբ հայագետն այդ գործում միանդամայն անպարտ է:

Գ. Աբղարյանը դրում է. «Առաջինը Գալուստ Տեր-Մկրտչյանն էր, որ ձեռագիրն ուսումնասիրելուց հետո եկել էր այն եզրակացության, թե դա Շապուհ Բագրատունու գրածն է...»: «Գալուստ Տեր-Մկրտչյանը, եթե փոքր-ինչ ավելի ժամանակ ունենար ձեռագիրն ուսումնասիրելու (նա վախճանվեց 1917 թ. հունիսի 13-ին) ...կդար այն եզրակացության, որ դա Շապուհ Բագրատունու գրածն էր...»: «Այս շփոթի պատճառն ամենից առաջ այն է...» և այլն:

Գ. Աբղարյանը շատ լավ գիտե, որ Գ. Տեր-Մկրտչյանը չէ, որ այդ բնագիրը վերադրել ու հրատարակել է Շապուհ Բագրատունու անունով: Դա արվել է նրա մահվանից երեք տարի հետո, և պատասխանատուն Մեսրոպ Տեր-Մովսիսյանն է, որը սակայն ազնվորեն խոստովանել է, որ Գ. Տեր-Մկրտչյանը այդ ևրկը՝ «իր արագգրության վերջին (էջ 61) կցված ձեռագրի համառոտ նկարագրության մեջ կոչել է «Հացունյաց խաչի նորագյուտ խմբագրությունը յուր շարունակությամբ» («Պատմություն...», էջ I), որ այդ բնագրի և Շապուհ Բագրատունու Պատմությանն առնչությունների մասին Գ. Տեր-Մկրտչյանը գրավոր ոչինչ չի թողել, այլ լուր բերանցի, այն էլ «որոշ վերապահությամբ» խոսել է Հուսիկ և Տիրայր Կալսկոպոսների հետ: Թե որոշակի փնջ էր ասել նրանց հայագետը մահվանից առաջ, Մ. Տեր-Մովսիսյանը չի՝ մանրամասնում, բայց որ Գ. Տեր-Մկրտչյանը տվյալ բնագիրը Շապուհ Բագրատունու գրածը չի՝ հա-

մարել, դա փաստ է, և Գ. Աբգարյանը պարտավոր էր հաշվի նստելու նրա թողած գրավոր կամքի հետ: Մանավանդ որ Մ. Տեր-Մովսիսյանը 1918—1921 թթ. ընթացքում երեք անգամ անդրադարձել է հիշյալ խնդրին և ամեն անգամ նահանջելով՝ ի վերջո խոստովանել, որ անանուն երկի և Շապուհի առնչության մասին Գ. Տեր-Մկրտչյանը գրավոր ոչինչ չի թողել, ասածն էլ բանավոր է եղել և վերապահություններ:

Ահա՛ Մ. Տեր-Մովսիսյանի խոսքերը՝ հրատարակված 1919 թվականին, «Արարատում» (էջ 41—42). «... Մատենադարան բերվեցին նոր ձեռագրեր Թուրքահայաստանից... ցուցակագրության ժամանակամիջոցում, ամեն օր հանգստյանս ժամերին այցելում էի անկողնում պառկած Գալուստին, զրուցելու թե քաղաքական անցուդարձի և թե ձեռագրերից ստացած հետաքրքիր նյութերի մասին: Երբ ձեռքս ընկավ այն ձեռագիրը, որի մեջ պահված էր «Շապուհի Պատմությունը», առանց իմանալու, որ դա Շապուհինն է, Գալուստին պատմեցի հետաքրքիր բովանդակությունը, և նա խնդրեց ձեռագիրը իրեն տանել: Տարա իրեն և փոքր հետո, իբրև էջմիածնի ազգային խորհրդի անդամ, սրա հանձնարարությամբ գնացի Ալեքսանդրապոլ, Կարս, Թիֆլիզ, մի կողմ թողնելով դրական զբաղմունքներս. հետո առանձին ուրախությամբ տեղեկացա, որ Գալուստը իմ նրան տված ձեռագրում ի հայտ է ածել կորած Շապուհ պատմագրին»:

Ահա՛ Մ. Տեր-Մովսիսյանի վերջին հայտարարությունը՝ բերված «Պատմութիւն Շապուհի Բագրատունւոյ» գրքի հառաջաբանում (էջ 1). «1917 թ. Վապուրականի և Մշո դաշտի հայ ժողովրդի մեծ գաղթի ժամանակ այնտեղի վանքերից և եկեղեցիներից էջմիածին բերած ձեռագրերի մեջ գտնվեց արտաքին տեսքով մի աննշան հատորիկ, պատմական խիստ հետաքրքիր և անծանոթ բովանդակությամբ: Զեռագրերի ցուցակագրության ժամանակ, երբ այդ օրինակը իմ ձեռքն անցավ, այդ մասին հայտնեցի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանին, և նա խնդրեց, որ իրեն տանեմ: Ես գործով հեռացա վանքից: Գ. Տ. Մ. մանրամասն ուսումնասիրելով, բերանացի, և ոչ գրավոր, մահվանից առաջ հայտնել էր Հուսիկ արքեպիսկոպոսին, որոշ վերապահությամբ և Տիրայր եպիսկոպոսին, որ դա է մինչև այժմ կորած Շապուհ Բագրատունու Պատմությունը. մինչդեռ յուր արտագրության վերջին (էջ 61) կցված ձեռագրի համառոտ նկարագրության մեջ կոչվում է «Հացունյաց խաչի նորագյուտ խմբագրությունը յուր շարունակությամբ»:

Գ. Տեր-Մկրտչյանը դուրախաբ նորելուկ չէր հայագիտության մարզում: Եթե նա ներքին համոզում ունենար ու ձեռքի տակ էլ շոշափելի կովաններ, որ արտագրածը և ուսումնասիրածը Շապուհ Բագրատունու կորած պատմությունն է (կամ թե նրա մի մասի հետագա խմբագրությունը), ապա որևէ ձևով, գոնե գրչագրի նկարագրության մեջ, իր վերաբերմունքը կարտահայտեր և այն չէր կորչի՝ «Հացունյաց խաչի նորագյուտ խմբագրությունը յուր շարունակությամբ» (էջ XXXIII):

Զենք տարակուսում, որ նորագյուտ բնագրի քննության ընթացքում Գ. Տեր-Մկրտչյանը խորհել է նաև Շապուհի կորած Պատմության ու այդ մեծարժեք երկի առնչությունների շուրջ ևս ու իր մտքերն ու տարակուսանքները բաժանել Հուսիկ և Տիրայր եպիսկոպոսների հետ, բայց այդ տարակուսանքները փարատվել են, այն էլ ո՛չ հօգուտ Շապուհի. այլապես, կրկնում ենք, նա այդ-

քան մեծ դյուաի մասին գեթ վերապահությամբ, երկու-երեք բառ կավելաց-  
ներ ձեռագրի նկարագրության մեջ:

Տարակարծության տեղիք չտալու համար մեջ ենք բերում այդ նկարա-  
գրութիւնն ամբողջությամբ, քաղելով նույն հառաջաբանից (էջ XXXIII—  
XXXIV). «2. 1371, փոքրագիր, կաշեկազմ. կազմի մեծութիւնը մոտավորա-  
պէս 15—10 սանտ. թուղթ, էջ 1—85 Հացունյաց խաչի նորագլուտ խմբա-  
դրութիւնը յուր շարունակությամբ: Հին գործարանային թուղթ, ջրանիշներով.  
տարրեր զրիշներից, նոտր շղագիր. անհիշատակարան, հավանորեն 17-րդ  
դարու գործ: էջ 86—193 ավելի նոր գրութիւն, նորագույն թղթի վրա. պա-  
սաճարար մտած է նույն կազմի մեջ, առանց հեղինակի անվան. Պատմու-  
թիւն Արրահամ կաթողիկոսի Կրետացւոյ. էջմիածին, 1870 թ.: Չկա որեւէ  
հիշատակարան: Լիմ անապատի կնիքը, էջ 1: Բերված է ձեռագիրը Վասպու-  
րականիցս:

Գ. Տեր-Լիկրտչյանը ամենեւին կարիք չունի Գ. Աբգարյանի ներողամտու-  
թյանը հայագիտության դեմ իր երեւէ չգործած հանցանքի համար: